Բժ. Լ. Ռ. ԿԱՆԵՎՍԿԻ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒԹԵՐ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՅԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ

614(47)
Կ-20

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

614(47)
4-20 ԱՅ.

ԲԺ. Լ. Ռ. ԿԱՆԵՎՍԿԻ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒԹԵՐ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՅԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

17.05.2013

3535

20 JUL 2010

3924
39

Д-Р. Л. О. Каневский
Охрана здоровья трудящихся
в стране Советов
Гиз. Арм. ССР, Ереван, 1939



ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՅԵՎ ՆՐԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստալինյան Սահմանադրությունը ավեց Խորհրդային Միության ժողովուրդների քսան տարվա հերոսական պայքարի հանրագումարը։ Մեր դարաշրջանի այդ փառատեղթի մեջ գրի յեն առնված մեր յերկրի պատմական հաղթանակները, վորոնք Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ ձեռք են բերված սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում։

Ստալինյան Սահմանադրությունն ամբողջ աշխարհի աշխատավորությանը ցույց և տալիս, վոր միայն խորհրդային իրավակարգն է այն իրավակարգը, վորը հաստատապես ապահովում է աշխատավոր մասսաների նյութական բարեկեցության անշեղ աճը, նրանց առողջության ամրապնդումը, կուլտուրայի աճը, բերկրալի, առույգ ու յերջանիկ կյանքը։

ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նշանակությունը չի կարելի ավելի լավ բնորոշել, քան այդ արեց նրա ստեղծողը, սոցիալիստական հեղափոխության հանճար ընկեր Ստալինը։

«Դա կլինի,—ասում եր նա իր զեկուցման մեջ*),—մի պատմական փաստաթուղթ, վորը պարզ ու սեղմ, համարյա արձանագրական վոճով, կխոսի ԽՍՀՄ-ում սոցիալիզմի տարած հաղթության փաստերի մասին, կապիտալիստական սարկությունից ԽՍՀՄ-ի աշխատավորների ազատագրման փաստերի մասին, ԽՍՀՄ-ում ծավալուն, մինչև վերջը հետեվողական դեմոկրատիայի հաղթության փաստերի մասին։

Դա կլինի մի փաստաթուղթ, վորը կվկայի, թե այն, ինչի մասին յերազել են յեվ շարունակում են յերազել միլիոնավոր ազնիվ մարդիկ կապիտալիստական յերկրներում,—արդեն իրականացվել է ԽՍՀՄ-ում։

Դա կլինի մի փաստաթուղթ, վորը կվկայի, թե այն, ինչ վոր իրականացված է ԽՍՀՄ-ում, լիովին կարող է իրականացվել նաեվ մյուս յերկրներում»։

Հոդվածը մարդու նկատմամբ, նրա կյանքի ու առողջության նկատմամբ կարմիր թելի պես անցնում է ամբողջ Ստալինյան Սահմանադրության միջով։ Վորովհետև ԽՍՀՄ-ն աշխարհում միակ յերկիրն է, վորտեղ աշխատավորների առողջության շահերը հակասության մեջ չեն նրա սոցիալ-տնտեսական սիստեմի հետ։

Սահմանադրության 1-ին հոդվածն ասում է.

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բանվորների յեվ գյուղացիների սոցիալիստական պետություն է»։

*) Ի. Ստալին.—Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, Հայկուսհրատ, էջ 66։

Սա նշանակում է, վոր վոչնչացված է աշխատավորների առողջացման ճանապարհին յեղած ամենագլխավոր խոչնդոտը՝ կապիտալիզմը։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմը քայքայում է մարդկությունը։ Տաժանակիր աշխատանքով ու գործազրկությամբ, քաղցով ու հյուծվածությամբ, պոռնկությամբ ու ալկոհոլիզմով, սիֆիլիսով ու տուբերկուլյոզով նա միլիոնավոր աշխատավորների մատնում է վաղաժամ մահվան և այլասերման։ Պարազիտների ու վոճրագործների մի չնչին խմբի շահույթի համար կապիտալիզմը կողոպտում է աշխատավորների առողջությունը, նրանց յերիտասարդությունը։

Կապիտալիզմին ոտար է աշխատավորների առողջության նկատմամբ հոգատարությունը։ Կապիտալիստական արտադրությունը վիթխարի հրեշի նման գործարանների ու ֆաբրիկաների մեջ է քաշում միլիոնավոր տղամարդկանց, կանանց ու յերեխաների, ծծում է նրանց ամբողջ ուժը և հետո դուրս շպրտում ու թողնում բախտի քմահաճույքին։

Բժշկականությունը կապիտալիստական յերկրներում ապրանք է, վոր վաճառում է բժիշկը և գնում է հիվանդը։

«Ամբողջ կապիտալիստական աշխարհում,—*ասում եր Մ. Ի. Կալինինը խորհուրդների Համառուսական 16-րդ համագումարում,*—բուժում են միայն հարուստներին։ Այնտեղ բժշկի ուշադիր վերաբերմունքը դեպի հի-

վանդը կանխորոշվում է դրամի այն գումարով, որ հիվանդը վճարում է բժշկին»*):

Հսկայական միջոցներ ծախսելով սպառազինման վրա՝ ֆաշիզմի յերկրները խիստ կրճատել են առողջապահության ծախսերը, դրանով իսկ ի չիք դարձնելով աշխատավորների առանց այն էլ թույլ զարգացած բժշկական սպասարկումը։

Միայն ավերիչ համաճարակների ահը, վախը սեփական առողջության համար ստիպում են կապիտալիստներին նվազագույն ծախսեր անել առողջապահության համար։ Բուրժուական պետության վերաբերմունքը դեպի աշխատավորների առողջության պահպանումը պարզ արտահայտվեց Մեծ-Բրիտանական բժշկական առոցիացիայի փոխ-նախագահ Ջեմս Բարրի յելույթի մեջ.«Պետությունը չպետք է ոգնի հիվանդներին։ Այդ նրա գործը չե։ Հիվանդը հետաքրքրություն է ներկայացնում միայն իր հարազատների, բժշկի և դեղավաճառի համար։ Յեթե պետությունն ավելորդ փող ունի, հարկավոր է ծախսել նրա համար, վորպեսզի ուժեղները, առողջներն ու համարձակները ավելի լավ ապրեն»։

Կապիտալիստական առողջապահության այդ դասակարգային բնույթը ցայտուն արտահայտություն գտավ ֆաշիզմի յերկրներում, վորտեղ աշխատավորների դաժան շահագործումը, աղքատությունն ու քաղաքական ճնշումը սոսկալի չափերի յեն հասնում։ Այդ պատճառով չկա վոչինչ զարմանալի, վոր կապիտալիստական յերկրներում աշխատավորների գործազրկության, աղքատության, կյանքի ցածր մակարդակի հետ միասին աճում է մահացությունը, նվազում է ծննդաբերությունը, պակասում բնակչության աճը, վատթարանում բնակչության ֆիզիկական դրությունը, աճում է պոռնկությունը։

Լեհաստանում ծննդաբերության խիստ նվազում է նկատվում։ Յեթե 1930 թվին մեկ հազար բնակչին ընկնում էր 17 ծնունդ, ապա 1935 թվին այդ թիվը իջնում է մինչև 12,1-ի*)։

Բնակչության բնական աճն Իտալիայում 1936 թվին հազար բնակչին 10,3 էր, 1937 թ. պակասել է մինչև 6,6։ Պաշտոնական տվյալների համաձայն, ֆաշիստական Գերմանիայի 100 խոշորագույն քաղաքներում բնակչության աճը 1937 թվին, 1936 թվի համեմատությամբ, յերեսուն տոկոսով պակասել է։

«Հիվանդանոցային դրամարկղների տվյալների համաձայն, Գերմանիայի բանվոր բնակչության մեջ հիվանդացումը տարեցտարի աճում է։ Այսպես, 1924 թվից մինչև 1929 թվի շրջանը, վորը զուգադիպում է ուժեղացած կապիտալիստական ռացիոնալիզացիայի ժամանակաշրջանին, տալիս է հիվանդության 33% բարձրացում։ 1932 թվից մինչև 1936 թիվը (ֆաշիստների տիրապետությունը) գերմանական բանվորների հիվանդացումն աճել է 40,9%-ով»**)։

1937 թ. հրապարակված պաշտոնական հաշվետվության համաձայն, բժշկական ոգնությունը ֆաշիստական Գերմանիայում կրճատվել է 7,3 տոկո-

*) «Պրավդա»— 24 հունվարի 1935 թ.

*) «Վոճրագործության աճումը Լեհաստանում», «Պրավդա», 16 փետրվարի 1937 թ.

**) Ս. Զաժկով.— «Պետական սոցիալական ապահովագրությունը ԽՍՀՄ-ում», «Տրուդ», 4 հունվարի 1938 թ. № 3

ով, հիվանդանոցային ոպառարկումը՝ 11 տոկոսով, ատամնաբուժական ոգնությունը՝ 20, 6 տոկոսով։ Սը-րանք միայն պաշտոնական հաշվետվության տվյալ-ներն են։

Գերմանիայի առանձին քաղաքներում դեղատը-ները հրաժարվում են դեղ բաց թողնել «վոչ արիացի» հիվանդներին։

Խորհրդային յերկիրը վոչնչացրել է միլիոնա-վորների առողջության սիստեմատիկ քայքայման հիմնական աղբյուրը—կապիտալիզմը։

ԽՍՀՄ-ում վոչնչացված է շահագործումը, վե-րացված են պարազիտային դասակարգերը, վոչնչաց-ված է մասսաների գործազրկությունն ու աղքատու-թյունը և հենց դրանով ստեղծված են բոլոր նախա-դրյալներն աշխատավորների լայն առողջացման հա-մար։

Մարդու նկատմամբ, աշխատավորների առող-ջության նկատմամբ այդ մեծ հոգատարության մարմնացումը և պսակավորումն է հանդիսանում ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը՝ սոցիալիզմի Ստալի-նյան Սահմանադրությունը։

Քաղաքների վերակառուցման ու առողջացման ուղղությամբ, նոր, հարմար, առողջ բնակարանների շինարարության ուղղությամբ և աշխատավորներին կապիտալիզմից ժառանգություն մնացած նախկին վողորմելի խրճիթներից ու նկուղներից այնտեղ տեղափոխվելու վերաբերյալ խորհրդային իշխանու-թյան բոլոր ձեռնարկումներն ու միջոցառումները, աշ-խատավորական լայն մասսաների սննդի արմատա-կան բարելավման միջոցառումները,—այս բոլորն

ամուր հիմք են ստեղծել աշխատավորների առողջու-թյունն ամրացնելու համար։

Բավական է նշել, վոր խորհրդային իշխանու-թյան գոյության յերկու տասնյակ տարիների ըն-թացքում կառուցված է 60 միլիոն քառակուսի մետր նոր բնակարանային տարածություն. սա կազմում է ամբողջ պետական բնակելի ֆոնդի 40 տոկոսը։ Այս բոլորն աշխատավորական լայն մասսաների մեծա-գույն սեփականությունն է։ Վերջապես մեր գործա-րաններն ու ֆաբրիկաներն իրենց սանիտարահիգիե-նիկ բարեկարգությամբ և անվտանգության տեխնի-կայով կապիտալիստական յերկրների գործարաննե-րից ու ֆաբրիկաներից տարբերվում են, ինչպես ցե-րեկը՝ գիշերից։ Սոցիալիստական ձեռնարկություննե-րին կից սարքավորված են հիանալի հանգստի սե-նյակներ, ճաշարաններ, մանկամսուրներ ու մանկա-կան հրապարակներ, դուշի սենյակներ, կինո, ռադիո և այլն։ Մեր գործարաններն ու ֆաբրիկաներն ըստ եյության կուլտուրայի ոջախներ են։

Ստալինյան Սահմանադրության մի շարք հոդ-վածներ սերտ առնչություն ունեն առողջապահության պահպանման հարցերի հետ, տալով հիմնական բազա ամենալայն առողջապահական միջոցառումների հա-մար, աշխատավորների առողջությունն ամրապնդե-լու համար։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏ

Աշխատանքի իրավունքը կապիտալիզմի պայ-մաններում նշանակում է շահագործվելու «իրավունք»,

անհույս, ուժասպառ անող, սարսափելի գործարանային ստրկացման «իրավունք»։

Կապիտալիզմի յերկրներում, ֆաշիզմի յերկրներում աշխատանքի իրավունքը բանվորների և գյուղացիների համար նշանակում է քաղցի իրավունք։

Գիտական կոմունիզմի մեծ հիմնադիր Կարլ Մարքսը ցույց տվեց, վոր կապիտալն անգութ է բանվորների առողջության ու կյանքի նկատմամբ։ Կապիտալիստական յերկրներում միանգամայն անհնար է լայն կերպով առողջացնել աշխատանքի և կենցաղի պայմանները, քանի վոր այդ առողջացման միջոցառումները հսկայական միջոցներ են պահանջում, վորպիսիք կապիտալիստները չեն ուզում ծախսել։ Կապիտալիստը շահագրգռված չէ բանվորների առողջության պահպանության գործով։

Նրան ծառայելու համար միշտ էլ գործազուրկների մի հսկայական բանակ կա։ Կապիտալիստն ամեն րոպե կարող է փողոց շպրտել հիվանդացած բանվորին կամ բանվորուհուն։

Կապիտալիստական պետության մեջ աշխատանքը ծանր, տաժանակիր պարտակ է։ Մեզ մոտ առողջ, ստեղծագործական, ուրախ աշխատանքը յուրաքանչյուր մարդու պահանջն է դարձել։

«Ամենաճանապարը մրցակցության մեջ կայանում է նրանում, վոր նա տրամաբանորեն հեղաշրջում է կատարում մարդկանց հայացքներում աշխատանքի մասին, վորովհետև նա աշխատանքն ամբարտավան ծանր բեռից, վորպիսին համարվում էր նա առաջ, վերածել պատվի գործի, փառքի գործի, առաքինության յեվ հերոսության գործի»*)։

Աշխատանքի իրավունքը ԽՍՀՄ-ում նշանակում է իսկական ազատ մարդու, սոցիալիստական մեծ պետության քաղաքացու՝ լիարժեք առողջ կյանքի իրավունք։

Մեր ինդուստրիայի նոր գիգանտները, վորոնք կառուցված են գիտության և տեխնիկայի վերջին խոսքի համաձայն, լուսավոր, ընդարձակ ու տաք ցեխերով, նորագույն գործիքներով ու սարքավորումով, դուշի կառուցվածքներով, հանգստի սենյակներով, բուֆետներով ու ճաշարաններով, կանաչապատված տարածություններով և այլն, ստեղծում են բոլոր պայմաններն առողջ, ուրախ աշխատանքի համար։

Ցարական Ռուսաստանից մնացած ձեռնարկություններն արմատական տեխնիկական վերակառուցման հետևանքով միանգամայն փոխվել են։

Ամենից ավելի ծանր աշխատանք պահանջող գործերը մեզ մոտ ավելի ու ավելի մեքենայացվում են։ Վնասակար աշխատանքային պրոցեսների հերմետացում և մեկուսացում է կատարվում։ Ցեխերը սարքավորվում են կատարելագործված վենտիլյացիոն կառուցվածքներով և այլն։

Աշխատանքի պայմանների արմատական բարելավումն արդյունաբերական ձեռնարկություններում և բժշկական սպասարկման կազմակերպումը ձեռնարկություններում հասցրին տրավմատիզմի զգալի կրճատման արդյունաբերական բանվորների մեջ։ Հի-

*) Ի. Ս տ ա լ ի ն.—Լենինիզմի հարցերը։

վանդացման և տրավմատիզմի նվազեցման զորեղ գործոն հանդիսացավ ստախանովյան շարժումը։

1930-ից մինչև 1935 թվի ժամանակաշրջանում արդյունաբերության բոլոր ճյուղերում տրավմատիզմն իջել է միջին հաշվով 35 տոկոսով։

Ստախանովյան շարժումը տանում է դեպի աշխատանքի կուլտուրայի բարձրացում, դեպի տեխնիկայի ավելի լավ յուրացում, մաքրության և կարգ ու կանոնի արմատացում՝ ինչպես աշխատանքի պայմանների մեջ արտադրությունում, այնպես էլ ընտանեկան կենցաղում։

Այս բոլորը տանում է դեպի հիվանդացման ու տրավմատիզմի նվազում։

Ստորև բերված աղյուսակները ցույց են տալիս, որ հիվանդացումը և տրավմատիզմը ստախանովականների մեջ ավելի քիչ է, քան վոչ ստախանովականների մեջ։

Աղյուսակ 1

Դեպքերի յեվ ոռեռի թիվը 100 ապահովագրվածի նկատմամբ[1])

Ցեխեր	Դեպքեր		Ոռեր	
	Ստախանովականներ	Վոչ ստախանովականներ	Ստախանովականներ	Վոչ ստախանովականներ
Մարտենյան	19, 6	88, 1	103, 1	698, 4
Գլոցային	7, 4	81, 8	53, 3	746, 0

*) 1936 թ. առաջին կիսամյակի տվյալները «Սերպ ի մոլոտ» գործարանում։ Ն. Գորշկով—«Կոլոմնայի փորձը», էջ 91, Կուսհրատ 1937 թ.

Աղյուսակ 2

Ժամանակավոր անաշխատունակության համար վճարված ոռեռի թիվը 100 ապահովագրվածի նկատմամբ*)

Հիվանդության տեսակները	Վոչ ստախանովականներ	Ստախանովականներ
Ընդամենը	502, 7	145, 5
Գրիպ	64, 9	28, 0
Ֆուրունկուլյոզ	47, 1	17, 4
Մալարիա	14, 0	3, 6
Ստամոքս-աղիքային	83, 0	26, 8
Դժբախտ դեպքեր	36, 0	15, 9
Կենցաղային դեպքեր . . .	23, 7	6, 8
Այլք	188, 2	43, 4

Ստախանովականները վոչ միայն ուշ-ուշ են հիվանդանում, այլև ավելի կարճ ժամանակով։

Աղյուսակ 3

Հիվանդանալու մեկ դեպքի միջին տևողությունը**)

Գործարաններ	Ստախանովականներ	Վոչ ստախանովականներ
Ստալինի անվան	7. 2	8, 4
Մոլոտովի անվան	5, 9	8, 8
«Ելեկտրոստալ»	6, 5	9, 0
«Կարդոլենտա»	6, 3	7, 4
2-րդ Պոդշիպնիկի	7, 2	8, 4

*) 1936 թ. յերկրորդ կիսամյակի տվյալները «Կոլոմնայի» գործարանում։ Ն. Գորշկով—«Կոլոմնայի փորձը» էջ 90, 1937 թ.

**) Ն. Գորշկով—«Կոլոմնայի փորձը» էջ 93. Կուսհրատ, 1937 թ

ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏ

Մեր յերկիրն աշխարհում միակ յերկիրն է, վորի հիմնական որենքով հոգատարությամբ ու խնամքով պաշտպանվում է աշխատավորների հանգստի իրավունքը։ Սահմանադրության 119 հոդվածն ասում է՝

ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն հանգստի իրավունք։

«Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ճնշող մեծամասնության համար աշխատանքային որը կրճատելով-հասցնելով 7 ժամի, բանվորների յեվ ծառայողների համար սահմանելով տարեկան արձակուրդ՝ աշխատավարձի պահպանմամբ, աշխատավորներին սպասարկելու համար սանատորիաների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով»։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով կուրորտները, սանատորիաները, հանգստյան տները դարձան աշխատավորների սեփականություն։ Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն աշխատավորները յերազել անգամ չեյին կարող կուրորտներում, սանատորիաներում ու հանգստյան տներում բուժվելու և հանգստանալու հնարավորության մասին։

Ցարական Ռուսաստանում կուրորտներից ու սանատորիաներից ոգտվում եյին միայն հարուստները։ «1907 թվին) Կովկասյան հանքային ջրերում «հանգստացողների» կազմն եր՝ 42 տոկոս կալվածատերեր, աղնվականներ ու վաճառականներ, 24 տոկոս գործարանատերեր, ֆաբրիկանտներ ու կուլակներ, 23 տոկոս սպաներ ու չինովնիկներ, 10 տոկոս գիտնականներ ու բժիշկներ, 1 տոկոս տերտերներ»։*

Հանգստյան տներ են ստեղծված մեր անծայրածիր սոցիալիստական հայրենիքի բոլոր անկյուններում. և՛ ծայրահեղ հյուսիսում, և՛ Միջին Ասիայում, և՛ Հեռավոր Արևելքում։ Մեզ մոտ հատուկ հանգստյան տներ են կազմակերպված հղի կանանց համար, ծծկեր յերեխաներով մայրերի համար, յերիտասարդության համար։

ԽՍՀՄ-ի բանվորների և ծառայողների նշանակալի մասը հանգստյան տներ և ուղարկվում պետական սոցիալական ապահովագրության միջոցների հաշվին, պրոֆ-բյուջեյի և տնտեսական մարմինների միջոցների հաշվին։

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում կառուցված են մի շարք նոր, հրաշալի ոարքավորված սանատորիաներ Սոչիում, Կիսլովոդսկում, Եսենտուկիում, Ղրիմում և Խորհրդային Միության մյուս վայրերում։

Սոցիալիստական ապահովագրության բյուջեյով յերկրորդ հնգամյակի չորս տարվա ընթացքում հանգստյան տների, սանատորիաների և կուրորտների վրա ծախսված է 1317,5 միլիոն ռուբլի։

Հնգամյակի ընթացքում (1933-1937 թ.թ.) պրոֆմիությունական կազմակերպությունների կողմից հանգստյան տներ, սանատորիաներ, կուրորտներ և հանգստի որվա բաղաներ են ուղարկված 15,5 միլիոն մարդ։

*) Գ. Մոսկատով.—«Խորհրդային քաղաքացու հանգստի իրավունքը» Համ(բ)Կ Կենտկոմի Գուսհրատ, 1937 թ.

3924
3924

1938 թվին պրոֆմիութիւններն ունեցին հանգստյան տների, սանատորիաների և կուրորտների 2719 հազար ուղեգիր։ 1938 թվին հանգստյան տներ, սանատորիաներ ու կուրորտներ 348 հազար մարդ ավելի յեն գնացել, քան անցյալ տարի։ Բացի դրանից, հանգստի որվա բաղանների համար տրամադրվել է 1,6 միլիոնից ավելի ուղեգիր։

Նախկին պալատներում, իշխանական վիլլաներում, նախկին կալվածատիրական տներում և դաստակերտներում հանգստանում և կազդուրվում են Խորհրդային Միության բանվորները ու գյուղացիները։

Պատրաստ են հանգստացողներին ծառայելու Ղրիմի արևոտ ափերը, Աբխազիայի և Աջարստանի արմավենու պուրակները, Սվանեթիայի լեռները, մեր սքանչելի հայրենիքի ամենագեղեցիկ տեղերում յեղած սանատորիաները, կուրորտներն ու հանգստյան տները։ Հանգստի իրավունքն իրականություն է դարձել միայն մեր յերկրում։ Այդ իրավունքի հետքն անգամ չկա կապիտալիստական յերկրների աշխատավորների մոտ։

Կապիտալի յերկրներում կուրորտա-սանատորիական բուժումից ոգտվում են բացառապես կապիտալիստները և նրանց հավատարիմ ծառաները։ Այն մասին, թե ով եր գնում արտասահմանյան կուրորտները, կարելի յե դատել, որինակ, ըստ Գերմանիայում հայտնի Բադեն-Բադեն կուրորտի։ Յերեք տարվա ընթացքում (1911-1913) այդ կուրորտն այցելողների մեջ կային 15 տոկոս իշխաններ, կոմսեր, աղնվականներ ու բարձր աստիճանավորներ, 6 տոկոս կալվածատերեր, 53 տոկոս բանկիրներ, ֆաբրիկատերեր, վաճառականներ, տնատերեր և ռենտայով ապրողներ, 1,5 տոկոս բարձրաստիճան հոգեվորականներ ու տերտերներ, 8 տոկոս անորոշ զբաղմունքի տեր մարդիկ և 3,5 տոկոս չինովնիկներ։ Յերեք տարվա ընթացքում այդ կուրորտում չի յեղել վոչ մի բանվոր և վոչ մի գյուղացի։

Միայն պրոլետարիատի դիկտատուրայի մեր յերկրում, վորին ղեկավարում է Լենինի—Ստալինի կուսակցությունը, բանվորներն ու ծառայողները կարող են պետության հաշվին հանգստանալ և վերականգնել իրենց առողջությունը սանատորիաներում, կուրորտներում ու հանգստյան տներում։ ԽՍՀՄ յեկող ոտարերկրյա բանվորական պատվիրակությունները, լինելով հանգստյան տներում ու սանատորիաներում, սքանչանում են մեր մեծ հայրենիքի բանվոր դասակարգի այդ նվաճումներով։

ԾԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Սահմանադրության 120-րդ հոդվածը, վորը խոսում է նյութական ապահովության իրավունքի մասին ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում—իր քաղաքացիների առողջության նկատմամբ սոցիալիստական պետության ունեցած հոգատարությունն արտացոլող ամենափայլուն մոմենտներից մեկն է։

Այդ իրավունքն ապահովվում է պետության հաշվին բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ, ձրի բժշկական ոգնությամբ, աշխատավորներին ոգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով։ Խորհրդային Միությունն ամբողջ աշխարհում միակ երկիրն է, որտեղ աշխատավորներն ապահովվում են բոլոր տեսակի ձրի և վարակյալ բժշկական ոգնությամբ։

Մեր պետությունը հսկայական միջոցներ է ծախսում առողջապահության վրա։ Պետական և տեղական բյուջեներով առողջապահության վրա արված ծախսերը 1937 թվին կազմում էին 6827 միլիոն ռուբլի։ 1938 թվին առողջապահության վրա ծախսված է 8076 միլիոն ռուբլի, այսինքն՝ 1249 միլիոն ռուբլով կամ 18,3 տոկոսով ավելի, քան անցյալ տարի։

Մայրության ու մանկության պահպանության ձեռնարկումների վրա 1938 թվին ծախսվել է 1382 միլիոն ռուբլի։

Մարդկանց նկատմամբ այսպիսի հոգատարություն հնարավոր է միայն հաղթանակած սոցիալիզմի երկրում։

Բավական է ասել, որինակի համար, որ խորհրդային իշխանության տարիների ընթացքում բուժարանների և պոլիկլինիկաների թիվը քաղաքներում ավելացել է 10 անգամ, գյուղերում՝ 4 անգամ (աղյուսակ 4)։

Մեր նվաճումներն առանձնապես ակնբախ են հիվանդանոցների, պոլիկլինիկաների և մյուս բուժական հիմնարկների ցանցի ծավալման բնագավառում՝

ազգային հանրապետություններում։ Ղազախական ԽՍՀ-ն, որինակ, 1938 թվի սկզբին ուներ 19 հազարից ավելի հիվանդանոցային մահճակալներ։ Ցարական Ռուսաստանում այժմյան Ղազախստանի տերիտորիայի վրա բոլոր հիվանդանոցներում յեղել է 1800 մահճակալ։ Ուզբեկստանի տերիտորիայի վրա 1913 թվին հաշվվում եր ընդամենը 800 հիվանդանոցային մահճակալ։ 1938 թվի սկզբին խորհրդային Ուզբեկստանն ուներ հրաշալի սարքավորված բուժական հիմնարկներ 13,500 մահճակալով։ Ուզբեկստանում 1913 թվին յեղել է 32 բուժարան, այժմ նրանց թիվը հասնում է 386-ի։ Կիրգիզիայում ցարիզմի ժամանակ յեղել է ընդամենը 100 հիվանդանոցային մահճակալ, իսկ այժմ Կիրգիզական ԽՍՀ-ում կա 2260 մահճակալ։ Տաջիկստանում մինչև հեղափոխությունը յեղել է մեկ հիվանդանոց և 8 հաղար գրբաց։ Իսկ հիմա՝ 96 հիվանդանոց, 211 բժշկական և բուժարանական տեղամասեր և 137 մանկաբարձական-բուժական կայաններ։

Միության ամենահեռավոր անկյուններում լայնորեն կիրառվում են ռենտգենը, ֆիզիոթերապիան, արյան փոխներարկումը և այլն։

Աղյուսակ 4

Հիվանդանոցային մահճակալների աճումը։

Հանրապետություններ	1 հունվարի 1914 թ. (%-ով)	1 հունվարի 1938 թ. (%-ով)
Բելոռուսական ԽՍՀ	100	360
Վրացական ԽՍՀ	100	400
Ուզբեկական ԽՍՀ	100	1630
Ղազախական ԽՍՀ	100	960
Կիրգիզական ԽՍՀ	100	2430

Խորհրդային առողջապահության հսկայական նվաճումն է հանդիսանում հիվանդների անային բուժոպասարկման կազմակերպումը։

Խորհրդային իշխանության 20 տարիների ընթացքում ստեղծված է հատուկ բուժհիմնարկների ճյուղավորված ցանց, վորպիսիք բոլորովին չեն յեղել մինչհեղափոխական Ռուսաստանում։ Այդպիսի հիմնարկների թվին են պատկանում տուբերկուլյոզային, վեներոլոգիական և պսիխոնեվրոլոգիական դիսպանսերները և այլն։

Մեծ ուշադրություն է դարձված բանվորների բուժոպասարկմանն անմիջականորեն արտադրության մեջ։

Ստեղծված է բուժական հիմնարկների նոր տիպ ձեռնարկություններում՝ առաջին բուժոգնության կայաններ, բժշկական առկայաններ, բուժարաններ ու պոլիկլինիկաներ։

Ցարական Ռուսաստանի ձեռնարկություններում կային հատ ու կենտ բուժական և բժշկական կայաններ, այժմ ԽՍՀՄ-ում կան 7 հազարից ավելի առկայաններ։

Բժիշկ կոչումը մեր յերկրում հարգանքով է շրջապատված։ Տասնյակ հազարավոր բժշկական աշխատավորներ՝ բժիշկներ, բուժակներ, բժշկական քույրեր յեռանդագին ու անձնվեր կերպով աշխատում են, պահպանելով բնակչության առողջությունը։ Կոմունիստական կուսակցությունը, Խորհրդային կառավարությունը և անձամբ ընկեր Ստալինը հսկայական ուշադրություն են դարձնում նոր բժշկական կադրերի աճման վրա։

270,000 միջին բուժաշխատողներ ներկայումս սովորում են ԽՍՀՄ-ի բժշկական դպրոցներում։

1913 թվին կար ընդամենը 13 բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություն։ Այժմ՝ 70 բժշկական ԲՈՒՀ-եր և բժիշկների կատարելագործման 10 ինստիտուտ։

Մեր բժշկական կադրերի թիվը վերջին տարիների ընթացքում ավելացել է ավելի քան 5 անգամ։ ԽՍՀՄ-ում այժմ աշխատում են 105 հազար բժիշկներ։ 1937 թվին բժշկական ԲՈՒՀ-եր են ընդունվել 24,5 հազար մարդ։ Միայն ուսանողների 1937 թվի հավաքագրումը գերազանցում է ցարական Ռուսաստանում աշխատող բոլոր բժիշկների թվից։ Մեր բժշկական ԲՈՒՀ-երում այժմ սովորում են 91,700 ուսանողներ։

Կուսակցությունը և կառավարությունը մեծագույն ուշադրություն են դարձնում բուժաշխատողների պատրաստման գործի բարելավման վրա, նրանց նյութական-կենցաղային դրության բարելավման վրա։

Համկ(բ)կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1935 թվի մարտի 4-ի վորոշման հետևանքով խիստ փոխվել է բժիշկների աշխատավարձը։ Բժշկի միջին աշխատավարձը բարձրացել է 53,5 տոկոսով։

Գյուղական բժշկական տեղամասն ամրապնդելու մասին ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումն*) ստեղծում է բոլոր պայմանները՝ բուժական գործը գյուղում լավագույն կերպով կազմակերպելու համար։

Մինչև հեղափոխությունը գյուղական բժշկական և բուժական տեղամասերը չափազանց քիչ եյին։ Հաղվագյուտ բացառությամբ՝ նրանք քարշ եյին տալիս իրենց վողորմելի գոյությունը։

1910—1912 թվերին այն նահանգներում, վորտեղ

*) «Պրավդա», 24 ապրիլի 1938 թ.

զեմստվոներ եյին կազմակերպված, գոյություն ունեյին 2686 բժշկական տեղամասեր, վորոնցից տեղամասային հիվանդանոցներ՝ 1710։ Միջին հաշվով մեկ բժշկական տեղամասին ընկնում եր 28-30 հազար մարդ։ Յուրաքանչյուր 10 հազար գյուղական բնակչի ընկնում եր 4 հիվանդանոցային մահճակալ։ Ինքնուրույն բուժական կայաններ գյուղում կային 2620։

Առ 1-ն հունվարի 1937 թ. գյուղական վայրերում կային 11488 բժշկական-տեղամասային բուժարաններ և 5540 տեղամասային բժշկական հիվանդանոցներ, 14484 բուժական և բուժական-մանկաբարձական կայաններ ու 7042 մանկաբարձական կայաններ։

Մոտ 12000 բժիշկներ այժմ աշխատում են գյուղական բժշկական բուժարաններում և հիվանդանոցային տեղամասերում։ 78 հազարից ավելի բուժակներ, մանկաբարձուհիներ և բժշկական քույրեր են աշխատում գյուղում։ Գյուղում աշխատող բժիշկների մեջ 1576-ը վիրաբուժներ են, 1061-ը՝ մանկաբարձ-գինեկոլոգներ, 654-ը՝ մանկաբուժներ և 259-ը՝ մալարիոլոգներ, 411-ը՝ ոսանիտարական բժիշկներ, 234-ը՝ վենեբոլոգներ, 185-ը՝ ակնաբուժներ և 1904-ը՝ ատամնաբուժներ. բացի դրանից, գյուղում աշխատում են ռենտգենոլոգներ, եպիդեմիոլոգներ, ոտոլարինգոլոգներ։

Կոլտնտեսային գյուղացիությունն ոգտվում է դիագնոստիկայի և բուժման այնպիսի նորագույն միջոցներից, ինչպիսիք են՝ ռենտգենը, ֆիզիոթերապիան։ 1937 թվի սկզբին գյուղական տեղամասային հիվանդանոցներին կից աշխատում եյին 198 ռենտգենյան կաբինետներ, 142 ֆիզիոթերապևտիկ կաբինետներ և 199 կլինիկական լաբորատորիաներ։

Ընդարձակվում է բժշկական հիմնարկների ցանցը գյուղում։ 1938 թվին կար 11.785 բժշկական տեղամաս. նրանցից 850-ում սարքավորված են լաբորատորիաներ մանրադիտակներով։ Գոյություն ունեցող ցանցից բացի, լրացուցիչ կերպով բացվում են 11 հազար բուժական և մանկաբարձական կայաններ։ Կառավարությունը 20,5 միլիոն ռուբլի յե հատկացրել գյուղական տեղամասային բժիշկների աշխատավարձը բարձրացնելու համար։ Նա պարտավորեցրել է՝ տեղամասային բժիշկներին ապահովել ձրի բնակարաններով, վառելիքով, լուսավորությամբ. նա ստեղծել է բոլոր պայմանները սիստեմատիկորեն բարձրացնելու բժշկի վորակը։ Այս բոլորը—մարդկանց նկատմամբ Ստալինյան հոգատարության արտահայտությունն է։

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկրներում անշեղորեն բարձրանում է բնակչության հիվանդացումը, մեզ մոտ նա խիստ նվազում է։ Ցարական Ռուսաստանում խոլերան, ժանտախտը, ծաղիկը, տիֆերն ամեն տարի գերեզման եյին տանում տասնյակ հազարավոր մարդկանց։ ԽՍՀՄ-ում լիովին վերացված են ծաղիկը, խոլերան և մյուս հիվանդությունները, վորոնք մինչև հեղափոխությունը մեծ թվով մահացության պատճառ եյին հանդիսանում։

Ցարական Ռուսաստանում ամեն տարի 100 հազարից ավելի մարդ եր հիվանդանում ծաղկով։ ԽՍՀՄ-ում ահա արդեն մի քանի տարի յե, ինչ դադարել է

ծաղիկ հիվանդությունը (ծաղկով հիվանդացողների թիվն ամբողջ Միության մեջ միավորներով և հաշվում)։

Մեծ հաջողությունների է հասել մեր երկիրը տրախոմայի և վեներական հիվանդությունների դեմ մղվող պայքարում։ Սիֆիլիսով հիվանդանալու նոր դեպքերն, օրինակ, քաղաքներում, խորհրդային իշխանության գոյության շրջանում, կրճատվել են 13 անգամ։ Տրախոմա հիվանդությունն այնպիսի հանրապետություններում, ինչպես Թաթարականը, Զուվաշականը, վորտեղ նա ամենից ավելի բարձր եր, խիստ կրճատվել է. Թաթարականում՝ 89 տոկոսով, Զուվաշականում՝ 75 տոկոսով։

1937 թվին մահացությունը մեր երկրում 40 տոկոսով ավելի ցածր եր, քան 1913 թվին։ Ստալինյան մեծ հոգատարությունը մարդկանց նկատմամբ իր վառ արտահայտությունը գտավ պետական սոցիալական ապահովագրության մեջ, վորը հանդիսանում է ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի կարևորագույն հեղափոխական նվաճումներից մեկը։

«Առաջին հնգամյակի չորս տարիների ընթացքում սոցիալական ապահովագրության ծախսի բյուջեն փոքր ինչ գերազանցում եր 10 միլիարդ ռուբլուց, երկրորդ հնգամյակի չորս տարիների ընթացքում նա հասավ 26,5 միլիարդ ռուբլու։ 1937 թվին սոցիալական ապահովագրության յեկամուտներն անցնում էին 5,5 միլիարդ ռուբլուց։ 1938 թվին նրանք կհասնեն մինչև 6,3 միլիարդ ռուբլու*)։

*) «Պրավդա», 14 մայիսի 1938 թ։ Առաջնորդող «Խորհուրդների երկրի սոցիալական ապահովագրության բյուջեն»։

Վոչ մի տեղ, վոչ մի կապիտալիստական երկրում չկա և չի կարող լինել սոցիալական ապահովագրության այնպիսի սիստեմ, ինչպես ԽՍՀՄ-ում։ Կապիտալիստական երկրներում շարունակ կրճատում են սոցապի առանց այն էլ չնչին հատկացումները։ Կրճատվում են նպաստների ու կենսաթոշակների չափերը և ստանալու ժամկետները, նպաստից զրկում են բանվորների ամբողջ կատեգորիաներ։

Գերմանական և իտալական ֆաշիզմը վերացնում է սոցիալական ապահովագրության վերաբերյալ նույնիսկ այն պոչատ որենսդրությունը, վորը նվաճել եր պրոլետարիատն անցյալում։ Սահմանից այն կողմը յերբ բանվորը ծերանում է կամ հիվանդանում, նրան փողոց են շպրտում։ Բոլորովին ուրիշ դրություն է մեր երկրում։

Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության մեջ չկան ավելորդ մարդիկ, վորոնց հարկավոր չլինի բուժել, կարելի լինի թողնել բախտի քմահաճույքին, զոհ դարձնել հիվանդությունների ու մահվան։

Մարդը թանգ է խորհուրդների երկրի համար։ ԽՍՀՄ-ն դրանով է տարբերվում կապիտալիստական երկրներից, վորտեղ վոչնչանում են «ավելորդ մարդիկ»։ Մարդիկ հարկավոր չեն կապիտալիզմին, միլիոնավոր լավագույն մարդիկ բեռ են դարձել։

Ահա թե ինչ է գրում Մ. Ի. Կալինինը խորհրդային սոցիալական ապահովագրության նշանակության մասին*)։

*) Մ. Ի. Կալինին.—«Բանվոր դասակարգն առաջներում և հիմա». «Պրավդա», 9 հոկտեմբերի 1937 թ.։

«Բանվորների ապահովագրությունը հիվանդության, աշխատունակությունը կորցնելու, ինչպես նայած ծերության դեպքում՝ սոցիալիստական հեղափոխության վոչ-փոքր նվաճումն է։ Ի՞նչ է նշանակում ձրի բժշկական ոգնություն։ Եթե վարակյալ բանվոր եյի, իմ աշխատավարձը գերազանցում եր բանվորների միջին աշխատավարձից։ Մեկ անգամ յես հիվանդացա գործարանում, հիվանդ պառկեցի յերկու ամիս յեվ այդ ժամանակի համար ապահովագրական դրամարկղից ստացա ընդամենը 15 ռուբլի։ Իսկ չե՞ վոր իմ աշխատավարձից դուրս եյին գալիս ապահովագրական մեկուկես տոկոսը։ Դրան ավելացրեք բժշկի վարձատրությունը, դեղերի արժեքը—յեվ ձեզ համար պարզ կլինի, թե ինչ դրության մեջ ընկավ վարակյալ բանվորը։ Հիվանդության յերկուշաբաթները, ինչպես առաջ ասում եյին, ինձ մաքուր թափվին»։

ԾԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՋ ՄՈՏ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏ

Կապիտալիստական աշխարհում խորը և անհաղթելի յե ծերության տրագեդիան բանվորի, գյուղացու, ինտելիգենտի համար։ «Ծերությունը — ուրախություն չե», «Քառասունս լրացավ, բանս պրծավ»։ Ժողովրդական իմաստությունն այսպիսի առածներով և ամփոփում կապիտալիզմի ժամանակ ծերության նկատմամբ յեղած վերաբերմունքի գայլի որենքը։

Մուրացկանություն, յեկեղեցու դուռ—ահա այս եր վիճակված հարյուր հազարավոր ծերերին, ժողովրդից յելած աշխատավորներին, վորոնք իրենց ուժն ու առողջությունը կորցնում եյին կապիտալիստական արտադրության մեջ։

ԽՍՀՄ-ում վոչ մեկին չի տանջում վերահաս ծերության միտքը։ Այստեղ յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր ծառայող գիտե, վոր սոցիալական ապահովագրության սիստեմն ապահովում է նրան և՛ ծերության, և՛ հիվանդության կամ աշխատունակությունը կորցնելու դեպքում։

Ծերացած կամ աշխատունակությունը կորցրած մարդը մեր յերկրում ստիպված չի լինելու, կապիտալի յերկրների աշխատավորների նման, մուրացկանություն անել, վողորմություն խնդրել, ձեռք մեկնել մի կտոր հացի համար։ Սոցիալիզմի յերկրում խորհրդային քաղաքացիների համար ապահովված է հանգիստ և ուրախ ծերություն։

ԽՍՀՄ-ում սոցիալիստական պետությունն ամեն տարի միլիարդներ և ծախսում ծերունիների, հաշմանդամների և ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած մարդկանց նյութական ապահովության համար։

Խորհրդային յերկրի ծեր մարդու խոկական զգացմունքները փայլուն կերպով արտացոլեց Դաղստանի ժողովրդական յերգիչ 70 տարեկան Սուլեյման Ստալսկին։

Ընկեր Կալինինի ձեռքից ընդունելով Լենինի շքանշանը՝ նա գտավ զարմանալիորեն ճիշտ հուզող բառեր, վորոնք արտահայտում են խորհրդային քաղաքացու ամենախորը լավատեսությունը՝

«Իմ յերկրում, վարտեղ չկա ծերություն,
Ուր հավերժական սուրգադաշտերն են հալչում,
Միլիոնները յեվ վոչ մենակ յես
Իրենց յերիտասարդությունն են զգնում»։

Շատ լավ եր գրում ընկ. Կալինինը՝ «Վարտե՞ղ է, վոր աշխատավոր մարդն իր հասարակ ֆիզիկական աշխատանքի համար, և վոչ թե վոստիկանության մեջ կամ հեղափոխական շարժման դեմ պայքարելու նպատակով ստեղծված ամեն տեսակի ուրիշ հիմնարկներում ծառայելու համար (այդպիսի մարդկանց բուրժուազիան համարյա բոլոր յերկրներում ապահովում է) իրավունք ունի պետական ապահովության՝ ծերության կամ հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում։ Վոչ մի տեղ աշխարհում աշխատավորներն այդպիսի իրավունքներ չունեն և, բանի դեռ իշխանության գլուխ բուրժուազիան է կանգնած, չեն ունենա»։

ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՋՈՂ ՍԵՐՆԴԻ ՄԱՍԻՆ

Սահմանադրության 121-րդ հոդվածն ապահովում է ԽՍՀՄ բաղաքացու կրթության իրավունքը։ Մեր յերկրում դպրոցն խիստ հանրամատչելի է, կրթությունն խիստ ընդհանուր է։ Մեզ մոտ կրթությունն ու դաստիարակությունը սերտորեն կապված են յերեխաների առողջության ամրապնդման հետ։ Կառուցված են և շարունակում են կառուցվել նոր, հրաշալի դպրոցներ։ Ե՛լ ավելի մեծ թվով բժիշկներ են սպասարկում մանկական հիմնարկները։ Միլիոնավոր յերեխաներ անցնում են ամառային ճամբարների, մանկական դաղութների, հրապարակների և առողջապահական մյուս հաստատությունների միջով։

Լենինի—Ստալինի կուսակցության, վողջ խորհրդային ժողովրդի կողմից սիրով աճեցվող մեր մատաղ սերունդն ոգավում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության բոլոր նվաճումներից։

Մեզ մոտ ամբողջ լավագույնը յերեխաներին է պատկանում—հրաշալի պալատներ, նոր, լուսավոր դպրոցներ, մանկապարտեզներ, մսուրներ, ստադիոններ, թատրոններ, ակումբներ, սանատորիաներ, պիոներական ճամբարներ։

Տարեցտարի մեր կառավարությունն ավելացնում է յերեխաների սպասարկման ծախսերը։

Այս տարի ԽՍՀՄ ժողկոմխորհը պետական սոցիալական ապահովագրության միջոցներից 654,4 միլիոն ռուբլի յե հատկացրել յերեխաների սպասարկման համար։ Այդ՝ կուսակցության ու կառավարության անդադրում հոգատարության փայլուն որինակն է մեր աճող սերնդի մասին։ Հենց միայն պիոներական ճամբարների պահպանման և սարքավորման համար պետական սոցիալական ապահովագրության և պրոֆմիութենական բյուջեյով բաց է թողնված մոտ 200 միլիոն ռուբլի։

Այս տարի պիոներական ճամբարներն սպասարկել են մոտավորապես 2 միլիոն յերեխայի։

«Մենք աճեցնում ենք մեր յերեխաներին։ Մենք ուզում ենք նրանցից մեծացնել փոխարինողներ, վորոնք կարողանան ավարտել Լենինի սկսած՝ մեր կուսակցության վարած գործը, վորն այնպես կազմակերպ-

Հորեն ու լավ մտածված կերպով ղեկավարում է ընկեր Ստալինը։ Մեծ գործ է, կարևոր գործ. մենք մեր յերեխաներից պետք է մեծացնենք ամբակազմ փոխարինողներ, ֆիզիկապես ուժեղ փոխարինողներ, վորպեսզի հեմոգլոբինն այնքան լինի, վորքան հարկավոր է թոքերն առողջ լինելու համար, մեծացնենք այնպիսի յերեխաներ, վորոնք կարողանան և՛ բերկրանքով ապրել, ներծծել կյանքի ամբողջ ուրախությունը, և՛ վորոնք միաժամանակ լինեն գիտակ, լրջախոհ, գիտությունն առաջ շարժող, նրան նոր հասարակակարգի կառուցմանն ի սպառ դնել կարողացող մարդիկ, կոլեկտիվ կերպով ապրել, աշխատել, կյանքը վայելել կարողացող մարդիկ»*)։

«Հենց նրան, այդ յերիտասարդությանն է վիճակված վերջացնել, ավարտել կոմունիզմի գործը, և հենց նրան են սպասում կոմունիզմի համար մղվող մարտերը, և նա այդ մարտերին պետք է դիմավորի ամբակազմ, առողջ—պողպատե նյարդերով ու յերկաթե մկաններով»։ (Լենին)։

Վոչ մի յերկիր աշխարհում այնչափ ուշադրություն չի դարձնում մարդկանց ֆիզիկական դաստիարակության վրա, ինչպես մեր սոցիալիստական հայրենիքը։ Վոչ վոք ֆիզիկական կուլտուրայի զարգացման համար այնպիսի հնարավորություններ չունի, ինչպիսիք կան մեր յերկրում։ Սպորտը մեզ մոտ հանդիսանում է բոլոր քաղաքացիների սեփականությունը։ Մեր կուսակցությունը, մեր կառավարությունն ապահովում են ֆիզիկական կուլտուրայի բարգավաճումը, բոլորին սպորտով պարապելու հնարավորություն տալիս։

ԽՍՀՄ-ում սպորտային շարժման աճման մասին պատկերացում ունենալու համար բավական է հիշել, վոր մինչև հեղափոխությունը Ռուսաստանում կային միայն 20 սպորտային ակումբներ, մինչդեռ այժմ մենք ունենք սպորտով պարապող 30 հազարից ավելի կոլեկտիվներ, խմբակներ, խմբեր ու ակումբներ։

Ֆիզկուլտուրայի զանազան մասսայական ձևերով ԽՍՀՄ-ում ընդգրկված է 10 միլիոնից ավելի մարդ, նրանցից 4 միլիոնից ավելի ֆիզկուլտուրնիկներ տվել են «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» կոմպլեքսի նորմաները։ Ֆիզկուլտուրան ԽՍՀՄ-ում իրագործվում է վորպես հսկայական պետական կարևորություն ունեցող գործ։ 1938 թվին ֆիզիկական կուլտուրայի զարգացման համար ծախսված է 600 միլիոն ռուբլի։ Այդ յերեք և կես անգամ ավելի է նրանից, վոր ցարական կառավարությունը 1913 թվին բաց եր թողնում ժողովրդական լուսավորության համար։

Վեթխարի միջոցներ են ծախսվում սպորտային կառուցվածքների շինարարության համար։ Այժմ խորհրդային Միության մեջ կան 650 մեծ ու փոքր ստադիոններ, մոտ 7 միլիոն մանր սպորտային հրապարակներ, 350-ից ավելի ջրային կայաններ, 2500-ից

*) Ն. Կ. Կրուպսկայա—Ծանր արդյունաբերության մտավորականների և ինժեներ-տեխնիկական աշխատողների կանանց Համամիութենական խորհրդակցությանն արտասանած ճառից։ «Պրավդա», 1936 թ. մայիսի 14-ի №-ը։

ավելի դահուկային կայաններ, 100 ֆիզկուլտ տներ այլն։

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում ժողովրդական մասսաների բարեկեցության աճի հետ միասին բերեց աշխատավոր բնակչության ֆիզիկական դրության նշանակալի բարելավում։ Մեր յերիտասարդությունն ամրակազմ ու առողջ է աճում։

Հետաքրքրական է նշել, որ 1925 թվին Մոսկվայի 14 տարեկան դպրոցականի միջին հասակը հավասար էր 145,4 սանտիմետրի, իսկ 10 տարի անց՝ 153,8 սանտիմետրի։ Նրա միջին քաշը 1925 թվին հավասար էր 37,7 կիլոգրամի, իսկ 1935 թվին՝ 43,3 կիլոգրամի։ Կրծքի շրջագիծն ավելացել է 3 սանտիմետրից ավելի։

Ե՛լ ավելի նշանակալից է զորակոչային տարիքի բանվոր յերիտասարդության ֆիզիկական զարգացումը։ 1923 թվին զորակոչիկի միջին հասակը հավասար էր 159,7 սանտիմետրի, քաշը՝ 51,9 կիլոգրամի, իսկ կրծքի շրջագիծը՝ 79,9 սանտիմետրի։ 1934 թվականին այդ թվերը համապատասխանաբար աճեցին՝ 162,4 սանտիմետր, 54,2 կիլոգրամ, 81,9 սանտիմետր։

Խիստ արտահայտված ֆիզիկական թերաճման դեպքերի թիվը զորակոչիկների մեջ 1935 թվին մինչհեղափոխական ժամանակի համեմատությամբ, կրճատվել է ավելի քան 90 տոկոսով։

Յեվ այդ՝այն ժամանակ, յերբ արտասահմանում՝ ֆաշիստական յերկրներում յերիտասարդության ֆիզիկական զարգացման վատթարացման պրոցեսն է գնում։

Աղյուսակ 5

Դպրոցների ընդունող հանձնաժողովների տվյալները (զորակոչային հասակի 100 մարդու համար)։

	1935 թ.	1936 թ.	1936 թ. տոկոսներով 1935 թ. նկատմամբ
Ընդհանուր ֆիզիկական թուլություն . . .	7, 32	13, 61	186
Վատ ատամներ . . .	15, 19	21, 82	137
Ֆիզիկական արատներ	17, 19	28, 94	165
Սրտի և սրտանոթների հիվանդություններ	7, 77	8, 95	115
Հարթ և ծռված վոտանթաթ	24, 8	37, 83	157
Մարսողական որդանների խրոնիկական հիվանդություններ	4, 77	7, 39	165

ՄԱՅՐ-ԿՆՈՋ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կնոջը տղամարդուն հավասար իրավունքներ տալը, որ գրի է առնված Ստալինյան Սահմանադրության մեջ, բացառիկ նշանակություն ունի կնոջ առողջությունը պահպանելու և ամրապնդելու և առողջ սերունդ դաստիարակելու համար։ Աշխարհի վոչ մի յերկրում կինը, վորպես մայր և քաղաքացի, չի ոգտվում այնպիսի հարգանքով ու որենքի պաշտպանությամբ, ինչպես ԽՍՀՄ-ում։

Միայն մեզ մոտ են վոչնչացված այն պատճառները, վորոնք խանգարում են կնոջը մայրությունը զու-

գակցել արտադրական և հասարակական աշխատանքին ակտիվորեն մասնակցելու հետ։ Ցարական Ռուսաստանում աշխատավոր մայր-կանայք այդ մասին չեր երազել անգամ չեյին կարող։ Այդ մասին չերազել չի կարող նաև աշխատավոր մայր-կինը կապիտալիստական չերկրում, վորտեղ իշխանությունը գտնվում է բուրժուազիայի ձեռքին, վորտեղ թագավորում է ֆաշիստական սանձարձակությունը, վորտեղ բանվորուհին և նրա չերեխաները մատնված են աղքատության, կիսաքաղց գոյության ու մահվան։

Կապիտալիստական աշխարհում միլիոնավոր աշխատավոր կանայք չգիտեն մայրության ուրախությունը։ Այնտեղ բանվորական և գյուղացիական ընտանիքում սոսկումով են դիմավորում ավելորդ բերանի չերևան գալը, վորովհետև չերեխաները, ինչպես և ծնողները, վողջ հասարակական-քաղաքական իրավակարգի կողմից մատնված են ծանր զրկանքների ու աղքատության, անհույս կյանքի։

«Դժբախտություն է չերեխաներ ունենալը»,— վորքան հաճախ կարելի չե լսել այս նախադասությունը կապիտալի չերկրներում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը միանգամայն նոր ձևով դրեց ու լուծեց մայրության ու մանկության պահպանության հարցը։ Խորհրդային Միության մեջ մայրն ու մանուկը շրջապատված են կուսակցության ու կառավարության սիրով, հոգատարությամբ և ուշադրությամբ։ Մի շարք հատուկ որենքներով ու վորոշումներով պաշտպանվում են մոր աշխատանքը, մոր ու մանկան իրավունքներն ու առողջությունը։

Թե ինչքան խղճուկ եր մայրության ու մանկության պահպանության հիմնարկների ցանցը ցարական Ռուսաստանում, չերևում է հետևյալ տվյալներից։ Նույնիսկ գավառական քաղաքներում ծննդաբերության ժամանակ բժշկական ոգնությամբ ապահովված եր կանանց 1 տոկոսից պակասը։ Գեղջկուհիները ծնում եյին տանը, առանց վորևե բժշկական ոգնության։ Ոգնությունը ցույց եյին տալիս տգետ տատմերները։ Ավելի վատ եր փոքր ազգություններին պատկանող կնոջ դրությունը։

Ներկայումս ԽՍՀՄ-ում քաղաքների վողջ կանացի բնակչությունը ծննդաբերության ժամանակ ապահովված է բժշկական ոգնությամբ։ Շնորհիվ կոլտնտեսային ծննդատների և մանկաբարձական կայանների լայն ծավալման՝ կին-կոլտնտեսուհիները նույնպես հնարավորություն ստացան ծնել լավ պայմաններում, բժշկական անձնակազմի հսկողությամբ։

Ցարական Ռուսաստանում 1913 թվին հաշվվում եր ընդամենը 6824 ծննդաբերական մահճակալ։

1935 թվին ծննդաբերական մահճակալների թիվն աճեց մինչև 46,000-ի, 1936 թվին՝ մինչև 63,500-ի (նրանցից գյուղում—22,500), իսկ անցյալ տարի, ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշման*) իրացման հետևանքով արդեն կար 96,980 մահճակալ (նրանցից գյուղում—30,000)։

Բացի այդ, լայն զարգացում ստացան կոլտնտե-

*) Արորտներն արգելելու, ծննդականների նյութական ոգնությունն ավելացնելու, բազմազավակ ընտանիքներին պետական ոգնություն սահմանելու, ծննդատների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցն ընդարձակելու և այլնի մասին։

սային ծննդատները։ Արդեն 1936 թվին նրանցում հաշվվում եր մոտ 16,000 մահճակալ։ Անցյալ տարվա վերջին կոլտնտեսային ծննդատներում կար 23,000 մահճակալ։ Ծննդաբերական մահճակալների ընդհանուր թիվն ամբողջ Միությանմեջ 1937 թվի վերջին հասավ համարյա 120 հազարի*)։

Ապահովելով կնոջը ծննդաբերական ոգնությամբ՝ խորհրդային առողջապահությունը ձգտում է հեշտացնել նրա ծննդաբերությունը, լայնորեն կիրառելով ծննդաբերության ցավազրկումը ծննդատներում։ Ծննդաբերության ցավազրկումը կիրառվում է նաև կապիտալիստական յերկրներում, բայց այնտեղ ցավազրկումը գոյություն ունի միայն հարուստների համար, աշխատավոր կանանց նա անմատչելի յե։

Խորհրդային Միության մեջ բոլորովին նոր ստեղծված է մսուրների, կանանց ու մանկական կոնսուլտացիաների, կաթնախոհանոցների լայնագույն ցանց։

Մինչհեղափոխական Ռուսաստանում մսուրները հաշվվում եյին միավորներով, բացվում եյին բժիշկների մասնավոր նախաձեռնությամբ, բարեգործական միջոցներով։

Ներկայումս ԽՍՀՄ-ում չկա վոչ մի հանրապետություն, վորտեղ ստեղծված չլինի մսուրային լայն ծավալուն ցանց։

Մանկամսուրների լայն ցանցը փռվել, տարածվել է մեր քաղաքներում և բանվորական ավաններում, գյուղական շրջանային կենտրոններում, խորհ-

*) Պրոֆ. Ն. Պրոպպեր-Գրաշչենկով,—«Ստալինյան հոգատարությունը մոր և մանկան նկատմամբ»։ «Իզվեստիա», 28 հունիսի 1938 թ.։

տնտեսություններում ու կոլտնտեսություններում։ Անցյալ տարվա վերջում մշտական մսուրներում տեղերի թիվը հասավ 770,100-ի, իսկ ամառվա բերքահավաքի ժամանակ խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում ծավալված սեզոնային մսուրներում՝ 4,000,000-ի։

Կառավարությունը, հրապարակելով վորոշումը, լրացուցիչ կերպով հատկացրել է 692,8 միլիոն ռուբլի՝ 1936 թվին մայրության ու մանկության պահպանության հիմնարկների շինարարության ու ծավալման համար։ Այդ հատկացումները տարեցտարի մեծանում են։

Վորոշումը պարտավորեցրել է գոյություն ունեցող մսուրային մահճակալների ցանցը 1939 թվի հունվարի 1-ին հասցնել քաղաքներում, խորհտնտեսություններում, բանվորական ավաններում և յերկաթուղու տրանսպորտում մինչև 800,000, գյուղական վայրերում՝ մինչև 500,000 և սեզոնայինները՝ մինչև 4,000,000 մահճակալի*)։

Մսուրներն առաջին պայմաններից մեկն են մանկական մահացությունների դեմ մղվող հաջող պայքարում։ Այդ մահացությունն առանձնապես բարձր եր ցարական Ռուսաստանի բազմաթիվ վոչ-ռուս բնակչության մեջ։

Մսուրային ցանցի լայն զարգացումը ԽՍՀՄ-ում նպաստեց փոքր ազգություններին պատկանող կնոջ ազատագրմանը, հնարավորություն տվեց նրան մաս-

*) Պրոֆ. Ն. Պրոպպեր-Գրաշչենկով.—«Ստալինյան հոգատարությունը մոր և մանկան մասին։ «Իզվեստիա», 28/VI 1938 թվ։

նակից դարձնելու արտադրական աշխատանքին և պետության կառավարմանը։

Մայրության ու մանկության պահպանության գործի վրա մեզ մոտ վիթխարի միջոցներ են ծախսվում։

Այսպես, մուրների, ծննդատների և կոնսուլտացիաների շինարարության համար խորհրդային իշխանությունը 1937 թվին բաց է թողել 500 միլիոն ռուբլուց ավելի, իսկ մայրության ու մանկության պահպանության ամբողջ գործի համար՝ 1800 միլիոն ռուբլուց ավելի։

Մայրությունը մեզ մոտ կնոջ համար դարձել է մեծագույն ուրախություն ու յերջանկություն։ Յերեխայի ծնունդն արդեն ընտանիքին չի սպառնում աղքատությամբ ու քաղցով, ինչպես ցարական Ռուսաստանումն եր, և ինչպես տեղի ունի այժմ կապիտալիստական յերկրներում։ Յերեխայի ծնունդը մեզ մոտ մեծ և լիակատար ուրախություն է։ Այդ ուրախության մասին անդադրում խոսում են խորհրդային յերկրի յերջանիկ կանայք։

1936 թվին վողջ յերկրի կողմից ընդունվեց աբորտն արգելելու, ծննդկանների բժշկական ոգնությունն ավելացնելու, բազմազավակ ընտանիքներին պետական ոգնություն սահմանելու և ծննդատների, մանկամուրների ու մանկապարտեզների ցանցն ընդարձակելու վերաբերյալ պատմական որենքը։

Անցել է 2 տարի, բայց ինչ փայլուն կերպով են արտահայտվում արդեն արդյունքները։ Մոսկվայում և Լենինգրադում ծննդաբերությունն ավելացել է համարյա յերկու անգամ, Բազվում և Տաշքենդում՝ 50 տոկոսով։ Նույն պատկերն է Կիևում, Մինսկում, Թբիլիսիում և Ֆրունզեյում։

Մեր հայրենիքի հազարավոր ընտանիքներ բազմազավակության պետական նպաստ են ստանում։ Մոր-կնոջ և յերեխաների նկատմամբ այդպիսի հոգատարություն հնարավոր է միայն սոցիալիստական պետության մեջ։

Բազմազավակ մայրերին ոգնելու և աբորտներն արգելելու վերաբերյալ կառավարության դեկրետի հրապարակման որվանից մինչև 1938 թ. մայիսի 1-ը Խորհրդային Միության մեջ վճարված է 1,357 միլիոն ռուբլի նպաստ։

Մայրերն ամենախորը յերախտագիտություն են հայտնում ընկեր Ստալինին, կուսակցությանն ու խորհրդային կառավարությանը՝ յերեխաների նկատմամբ ցույց տված հսկայական հոգատարության համար։

Յեվ դա այն ժամանակ, յերբ Ֆաշիստական Գերմանիայում փակվում են ծննդատները, յերբ մահացությունը կապիտալիստական յերկրներում աճում է տարեցտարի, յերբ դագաղները կապիտալիստական յերկրներում ավելի յեն շատացել, քան որորոցները։

Խորհրդային կինը՝ սոցիալիստական մեծ յերկրի իրավահավասար քաղաքացին, սոցիալիզմի ակտիվ կառուցողը, հանրոգուտ աշխատանքը զուգակցում է մայրության հետ։

Մեզ մոտ այժմ հիմք չկա ծննդաբերությունը սահմանափակելու։ Մեր յերկրի աշխատավորներին նյութական բարեկեցության վիթխարի աճումը, խորհրդային առողջապահության զարգացման համար հզոր բա-

դա ստեղծելը պայմանավորեցին այնպիսի բարձր ծննդաբերություն Խորհրդային Միության մեջ, որպիսին չկա և չի կարող լինել վոչ մի կապիտալիստական յերկրում։

1937 թվին ծննդաբերությունը ԽՍՀՄ-ում 1936 թվի համեմատությամբ բարձրացել է 18 տոկոսով։

Մոսկվայում 1936 թվին ծնվել է 71,037 յերեխա, իսկ 1937 թվին՝ 135,848, այսինքն, համարյա յերկու անգամ ավելի։ Կարելիայում 1937 թվի 10 ամսվա ընթացքում 4657-ով ավելի յերեխա յե ծնվել, քան 1936 թվի նույն ժամանակաշրջանում։ Կալինինյան մարզի «Վելիկիյե Լուկի»-ում 1937 թվին ծնընդաբերությունը 1936 թվի համեմատությամբ բարձրացել է 96 տոկոսով։ Ծննդաբերության անընդհատ աճման նման պատկեր է նկատվում մեր լայնածավալ հայրենիքի բոլոր յերկրամասերում ու մարզերում։

Ծննդաբերության աճման հետ միասին խիստ իջել է ինչպես ընդհանուր, այնպես եվ մանկական մահացությունը։ 1913 թվին մահացությունը մեծ թվերի յեր հասնում—1000 մարդուն 28 մահ։ Բոլոր յերեխաների մեկ քառորդից ավելին մինչև հեղափոխությունը մեռնում եր կյանքի առաջին տարում։

Բնակչության մահացությունը ԽՍՀՄ-ում 1913 թվի համեմատությամբ իջել է 46 տոկոսով, իսկ մանկականը՝ գրեթե յերկու անգամ։ Հարյուր տարուց ավելի պահանջվեց ԱՄՆ-ին, Ֆրանսիային ու Ճապոնիային, որպեսզի հասնեն մահացության իջեցման այդպիսի տոկոսի։ Մոսկվայում և Լենինգրադում մահացությունը կրճատվել է 2,5 անգամ։

Նշանակալից է մահացության իջեցումն ազգային հանրապետություններում։ Այսպես որինակ, Թաթարիայում մինչհեղափոխական տարիների համեմատությամբ մահացությունն իջել է 55,7 տոկոսով, Ուդմուրտիայում՝ 56,6 տոկոսով, Մոլդավիայում՝ 48,4 տոկոսով, Չուվաշիայում՝ 61,9 տոկոսով, Կոմի մարզում՝ 58,3 տոկոսով։

Բարձր ծնելիությունը մահացության խոշոր նվազման հետ վորոշում է բնակչության արագ աճը։ Այսպես, յեթե 1913 թ. բնակչության աճը Մոսկվայում կազմում եր յուրաքանչյուր հազար բնակչին 7,6 մարդ, ապա 1936 թվին աճը կազմում է 21,6 մարդ, այսինքն՝ համարյա 3 անգամ ավելի։

Բնակչության աճը ԽՍՀՄ վերջին տարիների ընթացքում կազմում է տարեկան մոտ 3 միլիոն մարդ, այն ժամանակ, յերբ Յեվրոպայի 24 կապիտալիստական յերկրներում, 400 միլիոն բնակչով, տարեկան բնական աճն ընդհանուր հաշվով զգալիորեն փոքր է այդ թվից։ Վերջին տարիների ընթացքում բնակչության աճը ԽՍՀՄ-ում նշանակելիորեն մեծացել է։

ԽՍՀՄ այցելած Ֆրանսիական հանրապետության առաջնորդության մինիստր պ. Ռյուկարն այսպես արտահայտվեց մայրության պահպանության մասին մեր յերկրում.

«Ձեզ մոտ մայրությանը ցույց է տրվում ամեն տեսակի ոգնություն, վորը հոկայական քաղաքական նշանակություն է ստանում։ Դուք վոչ միայն լայն եք դրել մորը ցույց տրվող ոգնությունը, այլև ամեն ինչ անում եք նրա համար, վորպեսզի նաև վորակապես այդ ոգնությունը լիովին հասնի իր նպատակին։ Սրանով յես հավատում եմ, վոր դուք վերին աստիճանի մարդասիրաբար եք վարվում»։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Անվիճելիորեն մեծ են խորհրդային առողջապահության նվաճումները։ Այդ նվաճումները կարող էին էլ ավելի մեծ լինել, յեթե չլիներ առողջապահական մարմիններում գործող, այժմ մերկացված, ժողովրդի թշնամիների վնասարար գործունեությունը։

Սոցիալիստական իրավակարգը ժողովրդական առողջության պահպանության գործը հասցրեց այնպիսի բարձրության, որպիսին մատչելի չէ աշխարհի վոչ մի կապիտալիստական յերկրի։

Միայն խորհրդային յերկրում է ապահովված գիտության իսկական ծաղկումը։ Գիտական ինստիտուտների համար ԽՍՀՄ-ում հրաշալի շենքեր—պալատներ են կառուցում։ Գիտական կադրերն ամեն տարի լրացվում են խորհրդային յերիտասարդության հարյուրավոր ու հազարավոր ներկայացուցիչներով։ Տարեցտարի ամրանում և աճում է ԽՍՀՄ-ում գիտական աշխատանքների բաղան, ավելանում է գիտական աշխատողների թիվը, աճում է յերիտասարդ ասպիրանտների բանակը։

Բժշկական գիտությունն իր զարգացման համար բոլոր պայմաններն ստացավ միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո։

Ցարական Ռուսաստանում բժշկական գիտությունը հալածված վիճակում էր գտնվում։

ԽՍՀՄ-ում կան 300-ից ավելի բժշկական գիտահետազոտական ինստիտուտներ։ Նրանցում աշխատում են մինչև 8000 գիտական աշխատողներ։

Ցարական Ռուսաստանի յերբեմնի հետամնաց ազգային ծայրամասերում մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը վոչ միայն չկային գիտական կենտրոններ, այլև պրակտիկ բժիշկների թիվը միավորներով էր հաշվվում։ Այժմ այստեղ, յեղբայրական միութենական հանրապետություններում կա գիտահետազոտական ինստիտուտների նշանակալի ցանց։

Մեր գիտությունն առաջ է քաշել մի շարք խոշորագույն գիտնականների, վորոնց անունները հայտնի յեն ամբողջ աշխարհին։ Բավական է նշել ակադեմիկոս Ա. Ա. Բոգոմոլեցին, շքանշանակիր պրոֆեսոր Ն. Ն. Բուրդենկոյին, Վ. Պ. Ֆիլատովին և շատ ուրիշների։ Խորհրդային գիտնականների այդ անունները մեծ ժողովրդականություն են վայելում աշխատավորական լայն մասսաների մեջ։ 1937 թվի դեկտեմբերի 12-ի պատմական որը մեր ժողովուրդը վորպես իր դեպուտատի ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ է ուղարկել շատ գիտնական բժիշկների։ Յեվ այժմ միութենական ու ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների դեպուտատների թվում կան բժշկական գիտության լավագույն մարդկանց անունները՝ պրոֆեսորներ Կիրեյեվ, Բերիտաշվիլի, Երիթավի և ուրիշները։

Խորհրդային կառավարության կողմից բժշկական գիտության զարգացման գործին հատկացրած բացառիկ ուշադրության ցուցանիշներից մեկը հան-

գիտանում են այն հսկայական հատկացումները, որ-պիսիք բաց են թողնվում գիտական բժշկական հիմ-նարկների և ինստիտուտների պահպանման ու շինա-բարության համար։

1937 թվին գիտական բժշկական հիմնարկների շինարարության համար տասն անգամ ավելի է բաց թողնված, քան 1934 թվին։ Այդ հատկացումներն ար-տահայտվում են հարյուրավոր միլիոն ռուբլիներով։

Միայն սոցիալիստական յերկրի ուժերը նեբեցին կազմակերպել այնպիսի վիթխարի գիտա-հետազո-տական հիմնարկ, ինչպիսին է Եքսպերիմենտալ բժշկա-կանության Համամիութենական ինստիտուտը, որի խնդիրն է մարդու օրգանիզմի բազմակողմանի ու-սումնասիրությունը։

Փայլուն հեռակարներ են բացված խորհրդային բժշկական գիտության առաջ, բժշկական բարձրագույն դպրոցի առաջ։

Մեզ հարկավոր է գիտություն «որն իր հին ու ճանաչված ղեկավարներին թույլ չի տալիս ինքնագոհ կերպով պարփակվել գիտության քուրմերի կեղևի մեջ, գիտության մոնոպոլիստների կեղևի մեջ, որը հաս-կանում է գիտության յերիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակությունը, ամենազորությունը, որը գիտության բոլոր դռները կամավոր կերպով ու հաճույքով բաց է անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ և հնարավորություն է տալիս նրանց նվաճելու գիտության բարձունքները, որն ընդունում է, որ ապագան պատկանում է գիտության յերիտա-սարդությանը» (Ստալին)։

Առողջապահական մարմիններում սոցոսկած, այժմ մերկացված, ժողովրդի թշնամիները փորձում եյին խանգարել լայն առողջապահական ձեռնարկում-ների կիրառումը և արգելակել մեր պայքարը վարա-կիչ հիվանդությունների դեմ։

Եպիդեմիոլոգիայի և պրոֆիլակտիկայի հարցերի նկատմամբ հարկ յեղած ուշադրության բացակայու-թյունը թուլացրեց պայքարն ինֆեկցիոն հիվանդու-թյունների, առանձնապես պարազիտար տիֆերի դեմ։

Վտանգի տակ դնելով բանվորների և նրանց ընտանիքների առողջությունն ու կյանքը, ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստական-բուխարինական բան-դիտները բանվորական ավաններն ու բանվորների բնակելի տները տեղավորում եյին սանիտարական տեսակետից վտանգավոր արտադրություններին ան-միջապես մոտ, գիտակցաբար դեպի քայքայումն եյին տանում սանիտարական կազմակերպությունը։

Վորպես վնասարարության հետևանք, մենք ու-նենք սանիտարական կազմակերպության վոչ բավարար ապահովություն կադրերով, այդ կադրերի պատրաստ-ման կրճատում, սանիտարական նշանակություն ու-նեցող շատ կարևոր օբյեկտների շինարարության կոն-սերվացիա։

Ժողովրդի թշնամիներն առողջապահական մար-միններում իրենց տարած վնասարարական աշխա-տանքով դիտավորյալ կերպով թուլացրին բժշկական ցանցը։ Նրանք քայքայեցին բժշկա-բուժարանական և բուժական տեղամասերի ու հիվանդանոցների նյութական բազան։ Գյուղական բժշկական ու բու-ժական կադրերի մասին վատ հոգատարությունը հասցրեց այն բանին, որ նրանք չեյին ամրանում

տեղամասերում. առանձին շրջաններում բժշկական տեղամասերը գրեթե ամայացել էին։

ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի առաջին սեսիայում առողջապահության ժողովրդական կոմիսարիատի գործունեությունը յենթարկվեց միանգամայն ճիշտ՝ բոլշևիկյան սուր քննադատության։

Վնասարարության ստոր մեթոդներից մեկն առողջապահական մարմիններում հանդիսանում էր ձեռնարկություններում յեղած լավագույն առկայանների լիկվիդացիան։

Մեծագույն պատմական փաստաթղթի իրացումը, ինչպիսին է արդարությունը արգելելու, մսուրները, ծննդատները և մայրության ու մանկության պահպանության մյուս հիմնարկները ընդարձակելու վերաբերյալ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի դեկրետը, առժողկոմատի նախկին ղեկավարության գործունեությամբ հարվածի տակ էր դրված, քանի որ մայրության և մանկության պահպանության հիմնարկների շինարարությունը մի քանի մարզերում վիժեցրած էր։

Տրոցկիստական-բուխարինական ֆաշիստների բանդան, որը գործում էր առողջապահական մարմիններում, մեծ վնաս հասցրեց նաև կապիտալ շինարարությանը։ Ուժերի ու միջոցների փոշիացումը, վնասարարական պլաններն ու նախահաշիվները շատ ավելի կասեցրին ընդհանուր և դեկրետային շինարարության տեմպերն ու վորակը։

Միանգամայն անտեսվում էր սանիտարական լուսավորությունը, վորպես հզոր միջոցներից մեկը հիվանդացման դեմ մղվող պայքարում։

Ժողովրդի թշնամիներին չհաջողվեց գլուխ բերել իրենց վնասարարական պլանները։ Նրանց զազրելի գիտավորությունները բացված են պանծալի ներքգործ-ժողկոմատականների կողմից։ Սակայն վնասարարության հետևանքները դեռևս լիովին չեն վերացված։

Կուսակցությունն ու կառավարությունն ստեղծել են բոլոր անհրաժեշտ պայմաններն առողջապահության ամենաարագ վերելքի համար։ Բժշկական աշխատողների և հասարակայնության ջանքերով ամենակարճ ժամանակամիջոցում պետք է վերացվեն վնասարարության բոլոր հետևանքները։

«Մենք ուզում ենք,—ասաց խորհրդային կառավարության գլուխ ընկեր Մոլոտովը խորհուրդների 7-րդ համագումարում,—վորպեսզի առողջապահության գործն ավելի արագ առաջ շարժվի, վորպեսզի աշխատավորների առողջությունն ամրանա և վորպեսզի մեզ մոտ է՛լ ավելի շատ ծնվեն խորհրդային հերոսներ»։

Ստալինյան Սահմանադրության մեջ—մեր դարաշրջանի այդ մեծագույն պատմական փաստաթղթի մեջ—աշխատավորների և նրանց առողջության նկատմամբ հոգատարությունը գտել է իր լիակատար արտահայտությունը։ Չկա աշխարհում մի յերկիր, վորտեղ այնքան ուշադրություն և հոգատարություն ցուցաբերվի դեպի ժողովրդի առողջությունը, ինչպես ԽՍՀՄ-ում։

Խորհրդային ժողովուրդն որինական հպարտության զգացմունքով է գնահատում 20 տարվա ընթացքում իր անցած ուղին։

Ստալինյան յերրորդ հնգամյակն է՛լ ավելի մեծ բարգավաճում կտա առողջապահությանը մեր սոցիալիստական իրավակարգի պայմաններում։

Մեր յերկրի աշխատավորները համոզվեցին սոցիալիստական իրավակարգի հսկայական առավելություններին մեջ։ Այդ իրավակարգն ապահովում է նրանց համար առողջ, կուլտուրական, առույգ ու բերկրալի կյանք։

Սոցիալիզմի յերկրի բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենցիան հսկայական հաղթանակներով, վիթխարի նվաճումներով դիմավորեցին խորհրդային իշխանության 20-ամյակը։

Յեվ այդ նվաճումների ամենավառ արտահայտությունը հանդիսանում է մարդկության լավագույն յերազանքները մարմնացնող Ստալինյան Սահմանադրությունը, վորը վավերացրել է այն բոլորը, ինչ ձեռք է բերված 20 տարվա ընթացքում իրենց յերջանկության համար, ուրախ, առողջ կյանքի համար, աշխատանքի, հանգստի, ապահովված գոյության համար, իրենց յերեխաների լուսավոր ապագայի համար՝ միլիոնավոր մարդկանց անձնազոհ պայքարի միջոցով։

Ստալինյան Սահմանադրության ճառագայթներով ջերմացած մեր յերկրի ազատ ու անկախ ժողովուրդները հսկայական քայլերով գնում են դեպի կուլտուրական և ունևոր կյանքի բարձունքները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստալինյան Սահմանադրությունը և հոգատարությունը մարդու և նրա առողջության մասին. 5
Կապիտալիզմը և ժողովրդական առողջությունը 7
Աշխատանքի իրավունքը մեզ մոտ և նրանց մոտ 11
Հանգստի իրավունքը մեզ մոտ և նրանց մոտ 16
Ծերության ժամանակ, անաշխատունակության և հիվանդության դեպքում ապահովության իրավունքը ԽՍՀՄ-ում և կապիտալիզմի յերկրներում 19
Ծերությունը մեզ մոտ և նրանց մոտ 28
Հոգատարություն աճող սերնդի մասին 30
Մայր-կնոջ և մանկան պահպանությունը 35
Ժողովրդական առողջության պահպանությունը և սոցիալիստական իրավակարգի հաղթանակը ԽՍՀՄ-ում . . . 44

Գատ. խմբագիր՝ Ղ. Կոմունի
Թարգման. Ավ. Շաթիրյան
Լեզվ. խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ե. Տ.-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Վ. 2027 Հրատ. № 4935
Գատվեր 543. Տիրաժ 3000
Թուղթ 94×105, Տպագր. 1¼ մամ.
Հանձնված է արտադրության 27 մայիսի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 10/VII 1939 թ.

Պետհրատի I տպարան, Ցերեվան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0279358

ԳԻՆԸ 35 Կ.

430.

3535

Д-Р. Л. О. КАНЕВСКИЙ

Охрана здоровья трудящихся в стране Советов

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.